



ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ, ՎՊՇ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ



Գիտելիքի, գրի և դպրության օրը Վանաձորի պետական համալսարանը նշեց տոնական բարձր տրամադրությամբ: Բուհի բակում հավաքվել էին ՎՊՇ ուսանողները, քոլեջի և վարժարանի սաները, բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ միասին ավետելու նոր ուսումնական տարվա սկիզբը:

Նոր ուսումնական տարին սկսվեց տոնական գեղեցիկ միջոցառմամբ, որի ընթացքում հնչեցին շնորհավորանքի ու բարեմաղթանքի բազմաթիվ խոսքեր՝ ուղղված առաջին կուրսեցիներին, բոլոր ուսանողներին, ՎՊՇ քոլեջի և վարժարանի սաներին:

Ներկաներին ողջունեց ՎՊՇ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը: Նա ուրախությամբ հայտնեց, որ այս տարի կրթօջախն իր հարկի տակ ընդունել է 344 բակալավրիատի, 133 մագիստրատուրայի, 26 քոլեջի ուսանողներ և 135 վարժարանի սաներ: «Սիրելի՛ ներկաներ, այս տարի առաջին զանգը մեզ համար առավել քան խորհրդանշական է, քանի որ մենք նշում ենք բուհի հիմնադրման 45-ամյակը և նշում ենք տոնը՝ համալսարան դարձած: Այս 45 տարիների կենսագրությունը քիչ չէ. հանրապետությանը պիտանի մասնագետներ, գիտության նվիրյալներ, պետական ու քաղաքական գործիչներ, արվեստագետներ: Նրանք այսօր էլ հպարտությամբ են նշում, որ եղել են մեր բուհի սաները»:

Գ. Խաչատրյանը շնորհավորեց բոլոր նրանց, ովքեր նախընտրել են բարձրագույն կրթություն ստանալ հենց ՎՊՇ-ում: Նա պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից շնորհավորեց բոլոր ուսանողներին, վարժարանի սաներին և Վստահեցրեց, որ բուհի հետ կապված բոլոր հույսերն արդարանալու են, դրանում նրանց կօգնեն փորձառու և բանիմաց մասնագետները. «Շնորհավորում են բոլորիդ այս գեղեցիկ օրվա կապակցությամբ, ձեր ուսնանուտը բարի է մեր կրթօջա-

խում, ուրախ ենք ձեզ մեր հարկի տակ տեսնելու համար: Բարի երթ բոլորիդ»:

Ուսանողներին իր հայրական օրհնանքն էր բերել Գուրգարաց թեմի առաջնորդ բարձրաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Զուլջյանը: Նա կոչարեց միասին աղոթել առ Աստված, որպեսզի ուսումնական տարին արգասաբեր և հաջողակ լինի ամենքի համար: Տերունական աղոթքից հետո նա իր շնորհավորանքի խոսքն ուղղեց բոլոր ուսանողներին. «Սեր երկրի ապագան օրհնված է, քանի որ ունենք նման գիտելիքներով հարուստ երիտասարդներ: Ուսանողական տարիներին որքան հնարավոր է շատ գիտելիքներ ամբարեք, քանի որ գիտելիք ունեցող մարդը կարող է հայրենիքին պիտանի մարդ դառնալ, սիրել հայրենիքը, պաշտպան կանգնել նրա արժեքներին: Փորձեք հասնել այն բարձունքին, որ կոչվում է գիտություն... Աղոթում են ձեզ համար, որպեսզի ձեր մեջ չխաթարվի մարդկայինը, բարոյականը, ազգայինը»:

Ուսանողներին շնորհավորեց նաև բանասիրական ֆակուլտետի դեկան, ք. գ. թ., դոցենտ Ալբերտ Պողոսյանը: Նա ևս հավաստիացրեց, որ ՎՊՇ-ն կարողարացնի բոլորի հույսերը: «Սիրելի՛ 1-ին կուրսեցիներ, առաջին հերթին ուզում են շնորհավորել ձեզ, ուրախ են, որ վերջապես հաղթահարված են ուսանող դառնալու բոլոր դժվարությունները: Հավատացած եղեք, որ բուհի ղեկավարությունը և ողջ աշխատակազմն ամեն ինչ արել, անում և անելու են, որ դառնաք շնորհալի մասնագետներ, որ ձեր ուսանողական օրերն անցնեն ջերմ մթնոլորտում, ուսումնական գործընթացը լինի պիտանի և արգասաբեր: Դե, իսկ կրթական գործընթացից զատ կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումները ձեր ուսանողական տարիները կդարձնեն առավել հետաքրքիր և անմոռանալի»:

Ուսանողներին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի անունից ջեր-



Մի շարք բարեփոխումների քննարկում ՎՊՀ գիտխորհրդի նիստում



Սեպտեմբերի 4-ին Վանաձորի պետական համալսարանի փոքր դահլիճում տեղի ունեցավ նոր ուսումնական տարվա առաջին գիտխորհրդի նիստը, որը վարեց ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը:

Օրակարգում ընդգրկված առաջին հարցը ՎՊՀ գիտական խորհրդի 2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին էր: Հարցի շուրջ զեկուցեց գիտքարտուղար Սեդա Բեժանյանը:

Գիտխորհրդի անդամները միաձայն հաստատեցին աշխատանքային պլանը:

Հաջորդ հարցը ՎՊՀ 2014-2018 թթ. զարգացման հայեցակարգի քննարկման մասին էր, որի շուրջ զեկուցեց համալսարանի ռեկտոր Գ. Խաչատրյանը: «Համալսարանի տեսլականն է՝ ձգտել 2018 թվականին դառնալու ՀՀ կրթության բնագավառում միջազգային չափանիշներին բավարարող, բարձրորակ մասնագետներ պատրաստող, ժամանակակից գիտական հետազոտություններ իրականացնող, կրթական և մշակութային արդյունավետ գործունեություն իրականացնող առաջադեմ հաստատություն», – նշեց ռեկտորը: Ձեկույցում խոսվեց նաև համալսարանի գործունեության ուժեղ և թույլ կողմերի, արտաքին խոչընդոտների և ներքին հնարավորությունների, ինչպես նաև առանձին ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերով նախանշված կոնկրետ միջոցառումները ներկայացնող SWOT վերլուծության մասին: Հարցի շրջանակներում ռեկտորը խոսեց նաև գիտահետազոտական գործունեության, միջազգային համագործակցության զարգացման, տեղեկատվական ոլորտի, սոցիալ-դաստիարակական գործունեության, մարդկային ռեսուրսների, գրադարանային համալիրի և մի շարք այլ ոլորտների զարգացման ռազմավարության մասին:

Հայեցակարգը գիտխորհրդի անդամների կողմից արժանաքանակ հավանության: ՎՊՀ ռեկտորը հավելեց, որ բոլոր ցանկացողները տասնօրյա ժամկետում կարող են հանդես գալ որպեսզի առաջարկներով:

Այնուհետ բուհի ռեկտորը խոսեց համալսարանի կառուցվածքային փոփոխությունների մասին: Դրանք հիմնականում վերաբերում են բուհում գործող որոշ ամբիոնների միավորմանն ու վերանվանմանը: Առաջարկվում է լուծարել «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի» ամբիոնը և ամբիոնի հաստիքները տեղափոխել «Ընդհանուր ֆիզդաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահար-

ցերի» ամբիոն՝ վերանվանելով այն «Ֆիզիկական դաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի» ամբիոն: Բացի այդ՝ նախատեսվում է միավորել և վերակազմակերպել հետևյալ ամբիոնները՝ «Կենդանաբանության, ֆիզիոլոգիայի և բժշկագիտության հիմունքների» և «Բուսաբանության և աշխարհագրության» ամբիոնները՝ վերանվանելով «Կենսաբանության» ամբիոն, «Մաթեմատիկական անալիզի» և «Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնները՝ վերանվանելով այն «Մաթեմատիկայի» ամբիոն:

Ռեկտորը նշեց, որ կապված կառուցվածքային փոփոխությունների հետ առաջիկայում մրցույթ կհայտարարվի նոր ամբիոնների վարիչների ընտրության համար: Այս հարցը ևս գիտխորհրդի կողմից հաստատվեց:

Օրակարգային հարցերից հետո տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն: Դոցենտի գիտական կոչման համար դիմել էր արվեստի ամբիոնի դասախոս, ա. գ. թ. Արամ Համբարյանը: Կազմվեց ձայներ հաշվող հանձնաժողով, տեղի ունեցավ ընտրություն (կողմ՝ 34, դեմ՝ 1, անվավեր՝ 0 ձայների քվեարկությամբ): Որոշում կայացվեց արվեստի ամբիոնի դասախոս, ա. գ. թ. Արամ Համբարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովին խնդրել հաստատելու ՎՊՀ գիտխորհրդի որոշումը:

Ընթացիկ հարցերի շրջանակներում գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը զեկուցեց բուհում ասպիրանտական կրթություն իրականացնելու համար նախատեսված մասնագիտությունների ցանկի հաստատման մասին: Նա նաև ներկայացրեց ամբիոնի դասախոսներ Հերմինե Բարուշյանի «Գրականությունը համացանցում» և Տարոն Դանիելյանի «Ձանգվածային հաղորդակցության ներածություն» դասընթացների ծրագրերը հրատարակության երաշխավորելու հարցը: Այս հարցերը ևս ընդունվեցին միաձայն:

← 1 մագին ողջույններ հղեց ՀՀ Ջինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Արա Գրիգորյանը: Նա հաջող ուսումնական տարի մաղթեց ուսանողներին կոչ անելով լավ սովորել և նոր գիտելիքներով զինել մեր մշակութային և գիտական համալիրը:

Նա նաև բարի ծառայություն և բարի վերադարձ մաղթեց զինծառայության մեկնած ՎՊՀ ուսանողներին:

Շնորհավորանքի ջերմ խոսքեր հնչեցին նաև ՎՊՀ ուսանողների, շրջանավարտների շուրթերից, որից հետո տեղի ունեցավ արդեն ավանդական դարձած Գիտելիքի բանալին հանձնելու գեղեցիկ արարողությունը:

Գիտելիքի բանալին այս տարի հանձնվեց պատմաշխարհագրական ֆակուլտետ ամենաբարձր միավոր-

ներով անվճար համակարգ ընդունված ուսանող, ՎՊՀ հեռակետային վարժարանի նախկին սան Դավիթ Կուստանդյանին:

Ուսանողական խորհրդի նախագահ Հենրի Մատինյանը ևս շնորհավորեց բոլոր ներկաներին Գիտելիքի օրվա առթիվ և կոչ արեց միշտ բարձր պահել ՎՊՀ ուսանող լինելու պատիվը:

Բարենաղթանքի և շնորհավորանքի գեղեցիկ խոսքերից հետո տեղի ունեցավ ուսանողների երդման հանդիսավոր արարողությունը:

Հնչեց առաջին զանգը՝ ավտետելով ուսումնական տարվա սկիզբը, որը նաև գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր երազանքներ կյանքի կոչելու սկիզբ է:

Նարինե ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՎՊԳ առաջին շրջանավարտները ձեռնադրվեցին

Մագիստրոսներ

Հունիսի 11-ին Հովհ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի ունեցավ Վանաձորի պետական համալսարանի մագիստրոսական կրթական ծրագրի առաջին շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսությունը:

Օրը իրադարձային էր նաև այն առումով, որ կյանք մտավ ՎՊՀ մագիստրոսների առաջին սերունդը:

Տոնական հանդիսությանը մասնակցեցին Գուգարաց թեմի առաջնորդ բարձրաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սուսաննա Թումանյանը, տիտղոսյան և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը, ֆակուլտետի ղեկավարները, մագիստրանտների հարազատները և այլ հրավիրյալներ:

Այս տարի 9 մասնագիտությունների գծով մագիստրոսական կոչումով ձեռնադրվեցին 129 շրջանավարտ, որոնցից 51-ն ավարտեցին առաջին կարգի դիպլոմով: Այս ցուցանիշն, իհարկե, խոսում է, վառ ասպացույցն այն բանի, որ մագիստրոսական կրթական ծրագիրը ևս բուխում ամուր հիմքերի վրա է:

Դիպլոմները տոնական տրամադրություն էր, շրջանավարտները մագիստրոսական գեղեցիկ համազգեստներով անհամբեր սպասում էին ձեռնադրման արարողությանը:

ՎՊՀ ռեկտորը շնորհավորեց բոլորին և հանձնեց առաջին կարգի դիպլոմները: «Սիրելի՛ շրջանավարտներ, – ասաց Գ. Խաչատրյանը, – շնորհավորում եմ ձեզ: Այս օրն իսկապես հիշարժան է, այսուհետ ձեր առջև բացվելու է մի ուրիշ աշխարհ: Իմ շնորհակալանքի խոսքն եմ հայտնում նրանց, ովքեր կազմակերպել են ձեր կրթությունը, շնորհակալություն նաև ձեր ծնողներին, որ կարևորում են հիմնավոր գիտելիքն ու կրթությունը, վստահում են մեր համալսարանին: Դուք առաջինն եք, որ ավարտում եք Վանաձորի պետական համալսարանը: Դուք այն շրջանավարտների դասին եք պատկանում, որոնք ասպացույցն են մեր բուհի կայունության: Շնորհակալություն ձեր դասախոսներին, ղեկավարներին, անբիռների վարիչներին, բոլոր նրանց, ում շնորհիվ դուք բուհից հեռանում եք գիտելիքների հարուստ պաշարով»:

ՎՊՀ ռեկտորը նաև հույս հայտնեց, որ մագիստրոսներից շատերին դեռ առիթ կունենան հանդիպելու ասպիրանտական համակարգում: Նա նաև հավելեց, որ մագիստրոսական կրթություն ասպիրանտներին այս 5 տարիների ընթացքում բուհն արդեն տվել է 652 շրջանավարտ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում կարմիր դիպլոմների արժանացածները:

Ներկաներին իր օրհնության խոսքն ասաց Գուգարաց թեմի առաջնորդ

բարձրաշնորհ Տեր Սեպուհ

արքեպիսկոպոս Չուլջյանը. «Շնորհավորում եմ բոլորիդ այս հիշարժան օրվա կապակցությամբ, հատկապես ձեզ, սիրելի՛ շրջանավարտներ: Դուք այսուհետ մուտք եք գործում գիտության աշխարհ, որտեղ շատ են մեծավորները: Այդ աշխարհը նույնպես նման է մի տաճարի, որտեղ մուտք գործելու խնդրանքի առջև այժմ կանգնած եք: Գիտությունը սուրբ է, մաքուր՝ մաքուր մարդկանց համար: Ապաշխարանք է գիտությունը, ճանփա, որ պետք է անցնեք ծնկաչոք: Ուստի ևս մեկ անգամ շնորհավորում եմ ձեր մուտքը այդ տաճարից ներս»:

Շրջանավարտներին մագիստրոսական կոչումով ձեռնադրեցին բուհի պրոռեկտորները, իսկ դիպլոմները հանձնեցին ռեկտորը և ֆակուլտետի ղեկավարները: Դիպլոմներից բացի շրջանավարտներին հանձնվեցին փոքրիկ հուշանվերներ:

Մագիստրոս ձեռնադրվելուց և դիպլոմներ ստանալուց հետո տեղի ունեցավ շրջանավարտների երդման հանդիսավոր արարողությունը: Մագիստրոսները միաձայն երդվեցին հավատարիմ մնալ իրենց մասնագիտությանը, միշտ կատարելագործել ձեռք բերած գիտելիքները, նպաստել մասնագիտական առաջխաղացմանը, բարձր պահել հարազատ բուհի անունը, ՎՊՀ շրջանավարտի բարի համբավը:

Օրվա հերոսներին ողջունեցին մագիստրատուրայի առաջին կուրս անվճար ընդունված և տարիներ առաջ մագիստրատուրան ավարտած շրջանավարտները: Հնչեցին նաև երաժշտական գեղեցիկ կատարումներ:

Տոնական հանդիսության վերջում շրջանավարտները, փորձելով զսպել հուզմունքը, շտապում էին լուսանկարվել սիրելի ռեկտորի, պրոռեկտորների և ղեկավարների հետ, ովքեր ուսումնական այս տարիներին ոչինչ չեն խնայել իրենց կրթությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Մագիստրոսները վստահ են, որ ուսանելու տարիներին իրենք ստացել են այնպիսի գիտելիքներ, որոնք կկարողանան կիրառել համապատասխան աշխատանքում և ամբողջ կյանքում:

Վկայականներ՝ օտար լեզուներ ուսումնասիրելու համար



Վանաձորի պետական համալսարանում գործող Լեզուների ուսուցման կենտրոնում ավարտվեցին 2013-2014 ուսումնական տարվա օտար լեզուների դասընթացները: Գիտելիքների ստուգման ամփոփիչ թեստը հաջողությամբ հանձնած մասնակիցներին տրվեցին վկայականներ:

Միջոցառմանը ներկա դասախոսներին, ուսանողներին ողջունեց ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը. «Արդեն քանի տարի է՝ Լեզուների ուսուցման կենտրոնը կատարում է իր առաքելությունը: Ես ողջունում եմ այս նախաձեռնությունը և շնորհակալություն հայտնում հատկապես այն ուսանողներին, ովքեր կարևորում են օտար լեզուների ուսումնասիրումը: Շնորհավորում եմ ձեզ և հույս հայտնում, որ սա վերջը չէ»:

Բուհի Լեզուների ուսուցման կենտրոնը գործում է 2012 թ. փետրվարից: 2013-2014 ուսումնական տարում

կազմավորվել են 12 խմբեր (8 յոթամյա դասընթացի խումբ, 4 արագացված դասընթացի խումբ): Դասընթացները կազմակերպվել են 5 օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, գերմաներեն և ֆրանսերեն), այդ թվում 7 խումբ՝ անգլերեն լեզվի տարբեր մակարդակների ուսուցմամբ: Խմբերը կազմավորվում են ըստ լեզվական մակարդակների, որոնք համապատասխանում են Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգի պահանջներին:

Լեզուների ուսուցման կենտրոնի պատասխանատու Գոհար Դիխոյանի հավաստմամբ՝ այս ուսումնական տարում կենտրոնի դասընթացներն ավարտել են թվով 81 երիտասարդներ, որոնցից 48-ը մասնակցել են յոթամյա, 33-ը՝ եռամյա արագացված դասընթացներին:

Դասընթացներն ավարտած ուսանողները վստահ են, որ այս ընթացքում ձեռք բերված գիտելիքները և ստացած վկայականը կնպաստեն հետագայում ավելի խոր լեզվական գիտելիքների ձեռք բերմանը, կօգնեն առավել ակտիվորեն մասնակցելու միջազգային նախագծերին, ինչը ներկայիս աշխատաշուկայի հիմնական պահանջներից է:

Լեզուների ուսուցման կենտրոնը շարունակելու է դասընթացները, որոնց կարող են մասնակցել ինչպես բուհի ուսանողները, այնպես էլ բոլոր ցանկացողները:

Նշենք նաև, որ Կենտրոնում դասավանդում են փորձառու մասնագետներ: Դասավանդումը կատարվում է դասավանդման ժամանակակից մեթոդներով: Դասասեյակներն ապահովված են լեզվական դասընթացների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով:

Միջազգային փորձագետների այցը ՎՊՀ

«Peer learning for social dimensionst (Փոխադարձ ուսուցում սոցիալական հարթություններում) ծրագիրն իրականացնող միջազգային փորձագետների խումբն աշխատանքային այցով եղավ նաև Վանաձորի պետական համալսարանում:

Հանդիպմանը ներկա էին բուհի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը, դեկաններ Ալբերտ Պողոսյանը, Թերեզա Շահվերդյանը, Զարուհի Վարդանյանը, Հերմինե Գրիգորյանը, ՎՊՀ հենակետային վարժարանի տնօրեն Սամվել Աղաջանյանը, ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն գործակալության» Լոռու մարզային կենտրոնի տնօրեն Արա Առաքելյանը, դասախոսներ, ուսանողներ:

Հանդիպման նպատակն էր ծանոթանալ համալսարանի կրթական համակարգին, գործող Բոլոնյան գործընթացին, բուհ-աշխատաշուկա փոխհամագոր-

ծակցությանը, ուսանողների սոցիալական խնդիրներին:

Սրանք այն ուսումնասիրվող ոլորտներն են, որոնք հնարավորություն կտան միջազգային մասնագետներին օգնել զարգացնելու ուսանողների ուսումնական առաջընթացը և այն գիտակցումը, որ իրենց հաջողությունները կախված են ժամանակի և ֆինանսական ռեսուրսների ճիշտ օգտագործումից: Ուսումնասիրողների պնդմամբ՝ եթե հղկվի ուսանող-աշխատաշուկա օղակը, ուսումնասիրության վերջնարդյունքը կարող է շատ ուսանողների հաջողության գրավականը դառնալ:

Միջազգային փորձագիտական խմբի շարքում էին բարձրագույն կրթության և գիտության հետազոտությունների գերմանական կենտրոնի միջազգային համակարգող խմբի ղեկավար Դոմենիկ Օրրո, խմբի անդամներ Մելինդա Սզաբոն, բարձրագույն



Հերմինե Գրիգորյանը՝ Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ղեկավար



Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի հերթական խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված էր ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ղեկավարի ընտրության հարցը: Նիստին ֆակուլտետի խորհրդի 24 անդամներից մասնակցում էին 22-ը, հարգելի պատճառով բացակայում էին 2-ը:

Ձեկույցով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը:

Սահմանված ժամկետներում և կարգով երեք ամբիոնների կողմից առաջադրվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հերմինե Գրիգորյանի թեկնածությունը:

Քվեարկությամբ կազմվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ Վ. Սարգսյանի ղեկուցմամբ՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի խորհրդի 24 անդամներից

ներկա էին 22-ը:

Քվեարկվեց ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի խորհրդի նիստի որոշման հաստատումը՝ ղեկավար պաշտոնում ընտրված թեկնածուի վերաբերյալ:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Հերմինե Գրիգորյանը ընտրվեց ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ղեկավարի պաշտոնում (կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Շնորհավորում ենք նորընտիր ղեկավարին, մաղթում բեղմնավոր աշխատանք և գիտական նոր ձեռքբերումներ:

←4



կրթության ոլորտի ազգային և միջազգային հետազոտությունների, գենդերային և սոցիալական անհավասարությունների ուսումնասիրությունների գծով մասնագետ Պետրա Վեյվարը և ուրիշներ:

Պրոռեկտոր Ա. Սանթրյանը ողջունեց հյուրերին և ներկայացրեց ՎՊՀ-ի կրթական և գիտական գործունեությունը, զարգացման գործընթացները, ուսանողական առօրյան, միջազգային տարբեր բուհերի հետ փոխհամագործակցության ծրագրերը, համալսարանի հիմնական ձեռքբերումներն ու խնդիրները:

Հյուրերին անչափ ոգևորեց բուհի վարած ուսանողամետ, ուսանողակենտրոն քաղաքականությունը, զեղչային ճկուն համակարգը, որը կարող է օգնել սոցիալական խնդիրներ ունեցող շատ ուսանողների: Նրանք կարևորեցին նաև աշխատաշուկայի լայն ուսումնասիրումը, որի շնորհիվ բուհը նախաձեռնել է մեծ պահանջարկ ունեցող մի շարք նոր մասնագիտությունների գծով 2015 թ.-ին ընդունելություն հայտարարել:

Միջազգային փորձագետներին նաև հետաքրքրեց, թե գնահատման և զեղչային ի՞նչ համակարգեր կան,

ինչպե՞ս է բուհը լուծում իր ֆինանսական խնդիրները, որքանով են ուսանողները ներգրավված գիտակրթական և մի շարք այլ գործընթացներում, լսելի՞ են, արդյոք, նրանց ցանկությունները, առաջարկները:

Փորձագետների մի խումբ առանձին հանդիպում ունեցավ այլ տարածաշրջաններից բուհ դիմած, սոցիալական խնդիրներ ունեցող, զեղչային համակարգից օգտվող, կրթաթոշակ ստացող ուսանողների հետ: Ուսանողների սոցիալ-տնտեսական վիճակի մասին որոշ պատկերացում կազմելու նպատակով մասնագետները հարց ու պատասխան կազմակերպեցին:

Հանդիպման վերջում փորձագետների խումբը շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանը ծրագրին աջակցելու և ջերմ ընդունելության համար: Նրանք ևս մեկ անգամ հիշեցրին, որ կատարվող վերլուծությունը ոչ թե բուհերը վերահսկելու, այլ նրանց ուղղորդելու և աջակցելու համար է:

Այլ բուհերում մասնատիպ հանդիպումներ ունենալուց հետո փորձագետները նախատեսել են լուսններ նաև Հայաստանի կրթական ոլորտի փորձագետների և մասնագետների հետ: Վերլուծության արդյունքները կիրառակվեն հունվար ամսին:

«Մեր բուհը ուսանողին տալիս է անհրաժեշտ գիտելիքներ»

«Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթ- քերթի «Շրջանավարտ» խորագրի հյուրն է Վանաձորի մանկատան տնօրեն Արշալույս Հարությունյանը:

– Պարոն Հարությունյան, ե՞րբ եք ավարտել մեր բուհը:

– Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկայի բաժինն ավարտել եմ 1976 թվականին:

– **Գրե՞ք 40 տարի է անցել այդ օրվանից. հետաքրքիր է իմանալ՝ պահպանվո՞ւմ են կապեր ինստիտուտի, դասախոսների, ուսանողական ընկերների հետ:**

– Իհարկե: Հաճախակի եմ հանդիպում իմ դասախոսների, ուսանողական ընկերների հետ, քննարկում եմք մանկավարժական մեթոդիկային վերաբերող տարբեր հարցեր, կարծիքներ փոխանակում:

– **Տարիների Ձեր աշխատանքային փորձառությունն ու շփումները, կարծում եմ, թույլ տալիս են բնութագրելու մեր բուհի ընդհանրական ուսանողին՝ ո՞վ է նա, ի՞նչ գիտելիքների և հմտությունների տեր, որքանո՞վ է մրցունակ աշխատաշուկայում:**

– Միայն դրական կարծիք կարող եմ հայտնել. մեր բուհը ուսանողին տալիս է անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորում լիարժեք քաղաքացիներ և որպես մասնագետ դարձնում մրցունակ աշխատաշուկայում: Ես

դրանում համոզվել եմ իմ աշխատանքային գործունեության ընթացքում:

– **Մանկատանը կա՞ն մեր բուհի շրջանավարտ աշխատողներ:**

– Այո՛, մանկատան 17 աշխատող ավարտել է մեր բուհը: Ի դեպ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ և Վանաձորի մանկատան սան Արմենուհի Ղուկասյանի հարսանեկան արարողությանը 2007 թվականին ներկա է եղել նաև ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը:

Ձրույցի ավարտին պարոն Հարությունյանը ցանկություն հայտնեց, որ ավելի ամրապնդվեն կապերը մանկատան և Վանաձորի պետական համալսարանի միջև, ոչ միայն ուսանողներն այցելեն մանկատուն, այլև դասախոսները: Ցանկալի կլինի, որ ուսանողների դիպլոմային աշխատանքների թեմաներն ընդգրկեն նաև մանկատանը վերաբերող հարցեր. օրինակ՝ ինչո՞ւ է երեխան հայտնվում մանկատանը: Մանկատունն այն եզակի կառույցներից է, որի վիճակը պետք է հետաքրքրի և մտահոգի մեզնից յուրաքանչյուրին:



Ինչու՞ եմ ընտրել այս մասնագիտությունը

Մասնագիտությունս ընտրել եմ առանց իմանալու, թե ո՞վ եմ դառնալու, ի՞նչ եմ անելու: Առաջին զուգորդումը սոցիալական ծառայության շենքն էր. մտածում էի, որ թոշակ, նպաստ բաժանող եմ դառնալու, աղքատների համար լավ բաներ եմ անելու: Հիմա, երբ արդեն մասնագիտությանը տիրապետում եմ բավական խորությամբ, կարող եմ միայն քննադատել իմ չափազանց միամիտ պատկերացումների վրա:

Ինչևէ, այսօր ես ուսանող եմ, սովորում եմ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 4-րդ կուրսում: Եթե դեռ մեկ ամիս առաջ հարցնեի՝ սիրո՞ւմ ես մասնագիտությունդ, պատասխանը բացասական էր լինելու:

Այն, ինչ ես չսիրեցի 3 ուսումնական տարում, ինձ համար սիրելի ու հարազատ է այսօր: Մասնագիտությունը ճանաչելու և սիրելու գործում դասախոսներն ունեն անփոխարինելի դեր, և եթե նրանք իրենց տեղում չեն, այն ուսանողը, ով ընտրել է մասնագիտությունն առանց սիրելու և ճանաչելու, կորած է:

Դեռ ամռանը ես մտածում էի, թե ինչով զբաղվեմ 4-րդ կուրսում, որպեսզի հետագայում աշխատանք ունենամ, քանի որ անցած 3 տարիներն ինձ չէին սովորեցրել սիրել մասնագիտությունս: Իմ հետաքրքրության շրջանակներն ավելի մեծ էին հասարակական շահ, հասարակական կարծիք, հայրենիքի նկատմամբ սեր, քաղաքացու

գիտակցություն, և այս ամենին «հակառակ»՝ ինչ-որ սոցիալական մանկավարժ, որի միակ բանուզործն այն պետք է լինի, որ շեղվածներին շտկի, օժտվածներին ինտեգրի, դժվար դաստիարակվողին դաստիարակի և այլն:

Սակայն կյանքը շրջադարձներով լի է: Այսօր արդեն ես կարողացել եմ հասկանալ իմ մասնագիտության բուն էությունը, այն, ինչը համապատասխանում է իմ հետաքրքրությունների շրջանակներին, ինչը ինձ կօգնի հասարակության «առողջ» ներկայացուցիչներ կերտել, հնարավորություն կտա դեռ մանկապարտեզից

մինչև բուհ երեխայի համար կարևոր դարձնել հերոսներին, կրթությունը, հայրենիքը, ծնողներին, առաջնորդվել սեփական արժեքներով, սկզբունքներով, լինել ինքնուրույն մարդ և իսկական քաղաքացի:

Հիմա ես հաստատ գիտեմ, որ դառնալու եմ սոցիալական մանկավարժ, քանի որ ես գտել եմ սոցիալական մանկավարժի իմ նախընտրած գործառույթը, իմ նախընտրած կերպարը: Բո-

լոր ուսանողներին, ովքեր սովորում են այս բաժնում, և ընդհանրապես մյուսներին էլ, ուզում եմ ասել, որ յուրաքանչյուր մասնագիտություն, որ յուրացնում եք, ունի այն, ինչը պետք է հենց ձեզ, ուղղակի պետք է լավ փնտրել այդ ինչ-որ բանը, իսկ գտնելուց հետո կդառնաք լավ մասնագետներ:

Մետաքսե ԴԱՎԹՅԱՆ
«Սոցմանկավարժություն», 4-րդ կուրս



Արիության դաս՝ հանուն խաղաղության

Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի նախաձեռնությամբ մի շարք համարակրթական դպրոցներում անցկացվեցին արիության դասեր՝ նպատակ ունենալով դպրոցականների մեջ սերմանել հայրենասիրություն, բարձր պահել ռազմահայրենասիրական ոգին:

Արիության դաս կազմակերպվեց նաև ՎՊՀ հենակետային վարժարանի սաների համար: Այն վարեցին ՀՀ Ձինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի հրամանատարական կազմից ներկայացուցիչներ: Հանդիպմանը ներկա էին ինչպես աշակերտներ, ուսուցիչներ, այնպես էլ ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, Գուրգարաց թեմի առաջնորդ բարձրաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, հենակետային վարժարանի տնօրեն Սամվել Աղաջանյանը և այլք:

3-րդ բանակային կորպուսի հրամանատարության ներկայացուցիչները մեկնաբանեցին հանդիպման նպատակը և առաջարկեցին մի գեղեցիկ ֆիլմ դիտել, որը պատմում էր ՀՀ Ձինված ուժերի, Արցախի ազատագրման, մեր նախկին և ներկայիս քաջագուն մարտիկների, նահատակների մասին, ովքեր նույնիսկ կյանքը չխնայեցին հայրենիքի սահմանները թշնամու ոտնձգություններից պաշտպանելու համար:

Ներկաները մեծ ուշադրությամբ դիտում էին հայ զինվորների մարտական ուղին նկարագրող ֆիլմը, նրանց առավել հուզեց վերջերս ադրբեջանական կողմի դիվերսիոն գործողությունների, փոխհրաձգության ժամանակ նահատակված զինվորների մասին տեսանյութը: Նման կորուստները ոչ միայն ցավ են զոհված զինվորների ծնողների, հարազատների համար, այլև ողջ ժողովրդի:

Թշնամու գնդակից ընկած այդ զինվորները մերօրյա



հերոսներ են, ովքեր զոհվել են հանուն հայրենիքի, մեր իսկ խաղաղության համար:

Տեսանյութից հետո հուզիչ և ոգևորիչ ելույթով հանդես եկավ Գուրգարաց թեմի առաջնորդ բարձրաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, որն առավել ընդգծեց օրվա խորհուրդը: Նա հավատացած է, որ թշնամուն կարելի է սաստել միայն հայրենիքի հանդեպ ունեցած մեծ սիրով: Պետք է հասնել այն գիտակցմանը, որ հայրենիքն ամենքինս է, բանակը մերն է, ամեն մի զինվոր մեր որդին է, մեր եղբայրը, և բոլորս ենք պարտավոր ծառայել հայրենիքին և անգամ կյանքը չխնայել երկրի խաղաղության համար:

Արիության դասին ներկա աշակերտների համար ակնհայտ դարձավ, որ մենք մեծ նվիրումի, երբեմն նաև զոհողությունների և կորուստների գնով ենք թշնամուն հետ պահում մեր սահմաններից: Այս պարտադրված պատերազմում մենք ստիպված ենք համբերատար և արժանի հակահարված տալ թշնամուն, որպեսզի պահպանենք և պաշտպանենք մեր հաղթանակը:

Հանդիպման վերջում ՎՊՀ ռեկտորը ներկաներին հավաստիացրեց, որ ռազմահայրենասիրական դաստիարակության գործը թե՛ համալսարանում, թե՛ համալսարանի քոլեջում և վարժարանում բարձր հիմքերի վրա է: Նա շնորհակալություն հայտնեց ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի հրամանատարությանը և սրբազան հորը՝ բուհի հարկի տակ նման ուսուցողական դաս կազմակերպելու համար:

ՎՊՀ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է 338 ՌԻՍԱՆՈՂ

Միասնական, կենտրոնացված և միջբուհական քննությունների լարված շրջանն ավարտված է: 2014-2015 ուսումնական տարում Վանաձորի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում ընդունելություն կազմակերպվել էր 16 մասնագիտությունների գծով: Բուհ ընդունվելու դիմում-հայտ ներկայացրել էին 424 դիմորդ:

ՎՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Սամվել Աղաջանյանի հավաստմամբ՝ այս տարի բուհ ընդունվել է 338 ուսանող, որոնցից 57-ը՝ անվճար ուսուցման համակարգում: Ընդունվածների

կազմում մեծ է նաև ՎՊՀ հենակետային վարժարանի սաների թիվը. նրանցից 62-ն ընդունվել են բուհ, այդ թվում 15-ն՝ անվճար:

Հիշեցնենք, որ նախորդ տարի ՎՊՀ դիմել էին 460 դիմորդ, որոնցից բուհ ընդունվել էին 384-ը, իսկ այս տարի՝ 424-ից 338-ը: Ուսանողների թվի կրճատումը որոշակիորեն կանխատեսելի էր:

Ս. Աղաջանյանը ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և իր անունից քննական շրջանը հաղթահարած և բուհ ընդունված ուսանողներին մաղթեց հաջողություններ, ուսումնական նորանոր նվաճումներ:



կայացուցիչներ, ճամբարակազմների հարազատները: Ճամբարի պետ Անահիտ Արզումանյանը ողջունեց բոլոր հյուրերին և «աստղիկցիներին» մաղթեց ուրախ ակնթարթներով հազեցած ամառային հանգիստ: Միջոցառման ընթացքում ճամբարականները հանդես եկան ուրախ երգ ու պարով: Ծրագրից դուրս եղան նաև անակնկալ երաժշտական համարներ: ՎՊՅ ռեկտորը 3-րդ ջոկատի ակտիվ երեխաներին հանձնեց պատվոգրեր: Ի պատասխան շնորհակալանքի՝ ճամբարի խորհրդի որոշմամբ շնորհակալագրեր տրվեցին ՎՊՅ ռեկտորին և արհկոմի նախագահին:

Ճամբարականները վստահեցրին, որ իրենց օրը հազեցած է եղել բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներով, իսկ ժամանակն անցնում էր շատ արագ:

Ա. Արզումանյանի հավաստմամբ՝ ճամբարային 15 օրերն ան-

մոռացդարձնելու նպատակով կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, ուխտագնացություն, արշավներ, էքսկուրսիա, ցուցահանդես, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, սպորտլանդիա, կավճանկարչություն, փակում՝ «Սա մեր տունն է» խորագրով:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ճամբարային միջոցառումները եզրափակվեցին ավանդական հրաժեշտի խարույկով:

Վանաձորի պետական համալսարանի «Բազում» ուսումնամարզական հանգրվանում գործող «Աստղիկ» ճամբարն այս տարի ևս ակտիվ հանգիստ ապահովեց բուհի աշխատակիցների շուրջ 80 երեխաների, թոռնիկների, ինչպես նաև արցախցի 15 դպրոցականների համար: Բացման հանդիսությանը ներկա էին ՎՊՅ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, արհկոմի նախագահ Ռոբերտ Գրիգորյանը, պրոֆեսորադասախոսական կազմից ներ-

**ԵՊՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿ**

1. Սանդրո Սարգսյան – Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.
2. Բախտիար Հովակիմյան – Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.
3. Հակոբ Սիմոնյան – Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.
4. Նիկողայոս Ադոնց – Երկեր հինգ հատորով, հատոր Բ, Պատմաբանասիրական ուսումնասիրություններ (հրատ. պատրաստեց Պ. Հովհաննիսյանը), 2006 թ.
5. Նիկողայոս Ադոնց – Երկեր հինգ հատորով, հատոր Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ (հրատ. պատրաստեց Պ. Հովհաննիսյանը), 2008 թ.
6. Նիկողայոս Ադոնց – Երկեր հինգ հատորով, հատոր Դ, 2009 թ.
7. Նիկողայոս Ադոնց – Երկեր հինգ հատորով, հատոր Ե, Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ (հրատ. պատրաստեց Պ. Հովհաննիսյանը), 2012 թ.
8. Նիկողայոս Ադոնց – Երկեր, հատոր Զ (լրացուցիչ), Հրապարակախոսություն, կազմող՝ Պետրոս Հովհաննիսյան, 2012 թ.
9. Հարություն Մ. Վենետիկյան, Ջերալդ Ա. Ուորֆիլդ – Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.

10. Համաստեղ – Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.
11. Գրիգոր Միքայելյան – Կիլիկիայի հայկական պետության պատմություն, 2007 թ.
12. Ստեփան Պողոսյան – Հայոց ցեղասպանության պատմություն, հատոր 1, 2008 թ.

«Վանաձորի պետական համալսարան»
երկշաբաթաթերթ
Վկայական՝ 727
2001, ՀՀ, Վանաձոր,
Տիգրան Մեծի 36
Էլ. փոստ՝ vsu69@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՅ
Հրատարակիչ՝
«Վանաձորի պետական համալսարան»
երկշաբաթաթերթի խմբագրություն
Տպաքանակը՝ 300
Տպագրվել է ՎՊՅ տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ
Պատասխանատու՝ Անի ԽԱԶԱՏՐՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՅԱՆԻ